ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Կասկածից վեր է, որ մեր երկրի զարգացման առանցքում ամեն պարագայում պետք է ընկած լինի գիտելիքը: Ասվածն առավել կարևորվում է անվտանգության խնդիրներում. մեզ պարտադրված սպառազինության մրցավազքում մենք պետք է շեշտը դնենք ոչ թե քանակի, այլ որակի և խելացի լուծումների վրա: Իսկ դա գիտելիք է պահանջում: Հետևաբար, որքան գրագետ լինեն հրամանատարները, որքան նորարարական՝ ռազմատեխնիկական լուծումները, այնքան մարտունակ կլինի բանակը: Այս տեսանկյունից ակնհայտ է, որ ռազմական կրթությունը, որին նվիրված էր «Ազգ-բանակ 2017» համաժողովը, Հայաստանի համար կենսական կարևորություն ունեցող ուղղություն է:

Շնորհակալություն եմ հայտնում «Ազգ-բանակ 2017» համաժողովին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար: Այն չափազանց կարևոր էր համաժողովի հանդեպ հանրային հետաքրքրություն ապահովելու, հայաստանյան կրթական և մասնավորապես ռազմակրթական հնարավորությունները ներկայացնելու և զինվորական մասնագիտության գրավչությունը բարձրացնելու տեսակետից:

Հուսով եմ՝ ձևավորված համագործակցությունը նաև արդյունավետ շարունակություն կունենա՝ վերածվելով ավանդույթի՝ հանուն հայոց բանակի զարգացման և ամրապնդման:

ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՈՒՏՔ No 1490
«22» 05 2012